

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈՒԿԸ (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ալվարո Ադիբեկի Անտոնյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 285 759 344 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 285 759 344 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Հ.Բունիաթյանի անվ. կենսաթիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24
Հ/հ' 900011024115
ՀՎՀՀ՝ 00005673
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

0014, Երևան, Պ.Սևակի 5/1
Հ/հ' 900018005463
ՀՎՀՀ՝ 00009794
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)
Ավարդ Աղիբեկի Անտոնյան




(ստորագրություն)

Անտոնյան Ավարդ Աղիբեկի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սադյանը և Կազմակերպության տնօրեն Ավարդ Աղիբեկի Անտոնյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-21/24-1/INSTBIOCH պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 285 759 344 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝



(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱԴՅԱՆ



Կազմակերպություն

տնօրեն՝



(ստորագրություն)

ԱՎԱՐԴ ԱՂԻԲԵԿԻ ԱՆՏՈՆՅԱՆ



ԱՆԿԱԿՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	15
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	8
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	10
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	7
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	2
Գրքեր, մենագրություններ՝	2
Գիտաժողովի նյութեր՝	15
Արտոնագրեր՝	2

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն) Ավետիս Առաքելի Աստուխյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն) Վարդանիշյան Հովհաննիս Հրովմիկի



Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Ղրամ»

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	250 818 000	50 163 600	62 704 500	62 704 500	75 245 400
2.	տնտեսական ծախսեր՝	22 120 320	4 424 064	5 530 080	5 530 080	6 636 096
3.	այլ ծախսեր՝	12 821 024	2 564 204	3 205 256	3 205 256	3 846 308
Ընդամենը՝		285 759 344	57 151 868	71 439 836	71 439 836	85 727 804

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն) Վանյան Վահագն Աստուկյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն) Սարգսյան Տիգրան Հովակոսի Բարսեղյան



Վ. Տ.

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ղ դրամ»

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	22 120 320
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	7 400 000
2.	գազի ծառայություն	3 900 000
3.	ջրամատակարարման ծառայություն	850 000
4.	կապի ծառայություն	770 000
5.	աղբահանություն	340 320
6.	պահնորդական ծառայություն	6 360 000
7.	մասնագիտական ծառայություններ	2 500 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	12 821 024
1.	սարքեր և սարքավորումներ	4 000 000
2.	գործուղումներ	1 500 000
3.	գիտական միջոցառումներ	300 000
4.	լաբորատոր նյութեր	2 000 000
5.	գրասենյակային և տնտեսական պարագաներ և նյութեր	950 000
6.	շենքի ընթացիկ նորոգում	3 500 000
7.	Այլ ծախսեր	571 024

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն) Վահրա Աղիբեկի Աստուխյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն) Արմեն Տրամուկի Բարսեղյան



Կ. Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

- A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
- B - ամիսների քանակ E - գումարային
- C - աշխատաժամանակի ռեժիմ

«Որոշում»

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Անտոնյան Ավարդ Ադիրբեկի	Տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Չախյան Սամվել Գրիգորի	Փոխտնօրեն գիտական հարցերով	175 000	12	ներքին համատեղություն	20	2 100 000
Հայրապետյան Հռիփսիկ Լյուդվիկի	Գիտական քարտուղար	300 000	12	հիմնական	40	3 600 000
Ներսիսյան Ստեփան Կառլենի	Փոխտնօրեն ընդհանուր հարցերով/ Պարետ	350 000	12	հիմնական	40	4 200 000
Չերքեզյան Քրիստինե Մարատի	Կադրերի բաժնի պետ/Իրավաբան	370 000	12	հիմնական	40	4 440 000
Բարսեղյան Սերինե Հրանտի	Գլխավոր հաշվապահ	350 000	12	հիմնական	40	4 200 000
Շահբազյան Գեղեցիկ Պոլաթի	Հաշվապահ-գանձապահ	185 000	12	հիմնական	40	2 220 000
Չաքարյան Արտաշես Կառլենի	Ինժեներ/Մատակարար	240 000	12	հիմնական	40	2 880 000
Գալստյան Ռաֆայել Մասիսի	Ինժեներ	70 000	12	հիմնական	20	840 000
Բարսեղյան Վահագն Հովհաննեսի	Պահեստապետ	50 000	12	ներքին համատեղություն	20	600 000
Չոփուրյան Ստանիսլավ Ռուդոլֆի	Ցանցային ադմինիստրատոր	52 000	12	հիմնական	20	624 000
Վանյան Հարություն Ռաֆայելի	Կայքի վերահսկման մասնագետ	52 000	12	համատեղություն	20	624 000
Ռաֆայելյան Կարինե Արտյոմի	Գրադարանի վարիչ	25 000	12	հիմնական	10	300 000
Ավետիսյան Կարեն Մանուկի	Կենդանանոցի վարիչ	125 000	12	հիմնական	40	1 500 000
Սաֆարյան Սիրարվի Վարդանի	Կենդանանոցի բանվոր	120 000	12	հիմնական	40	1 440 000
Բաբաջանյան Վահե Ռուբենի	Կենդանանոցի խնամող	120 000	12	հիմնական	40	1 440 000
Մովսեսյան Մարինա Ռաֆայելի	Հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Թանքարյան Հռիփսիմե Կարապետի	Հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հովհաննիսյան Լիդիա Ալեքսանդրի	Հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Խաչատրյան Գարեգին Խաչատուրի	Բանվոր	90 000	12	հիմնական	30	1 080 000
Մանուկյան Սարգիս Յուրիկի	Էլեկտրիկ	52 000	12	համատեղություն	20	624 000
Մարտիրոսյան Գագիկ Սեյրանի	Վերելակի մասնագետ	25 000	12	համատեղություն	10	300 000
Բաղդադյան Աշոտ Ռազմիկի	Հյուսն	96 000	12	հիմնական	40	1 152 000
Գալստյան Գալուստ Իլյիչի	Սանտեխնիկ	100 000	12	հիմնական	40	1 200 000

Մանուկյան Արամ Վահագնի	Բակիր	50 000	12	հիմնական	10	600 000
Բայան Գայանե Արթուրի	Ռեֆերեստ	150 000	12	հիմնական	40	1 800 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Ներդրումների կենսաքիմիա						
Չախյան Սամվել Գրիգորի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Լաբորատորիա Անալիտիկ քրոմատոգրաֆիայի և մասսպեկտրալ հետազոտությունների						
Մադոյան Ռոզա Անուշավանի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Աղաբաբովա Ազնեսա Աղայի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Բարսեղյան Վահագն Հովհաննեսի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Սարգսյան Հակոբ Հովհաննեսի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Սուքիասյան Աննա Գուրգենի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Բարսեղյան Ջենմա Լիպարիտի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Սարգսյան Հասմիկ Հակոբի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	հիմնական	20	1 080 000
Աթոյան Վահե Վահագնի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Ապրեսյան Արա Շահենի	Կրտսեր գիտաշխատող	135 000	12	հիմնական	40	1 620 000
Լաբորատորիա Նյարդաակտիվ միացությունների կենսաքիմիա						
Դանիելյան Քրիստինե Էդգարի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Հակոբյան Գոհար Վլադիմիրի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Մանուկյան Արփի Տիգրանի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Մխիթարյան Լիանա Մարտիրոսի	Կրտսեր գիտաշխատող	180 000	1	հիմնական	40	180 000
Օհանյան Նելլի Արթուր	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Օհանյան Սվետա Ռաֆիկի	Ավագ լաբորանտ	117 000	4	հիմնական	30	468 000
Պողոսյան Լիլիթ Ժիրայրի	Լաբորանտ	0	12	հիմնական	20	0
Ջաքարյան Նազգեի Հրաչի	Ավագ լաբորանտ	78 000	12	հիմնական	20	936 000
Ռիթա Խալիլ Խալլուֆ	Լաբորանտ	60 000	12	հիմնական	20	720 000
Լաբորատորիա Ակտիվ թթվածնի նյութափոխանակության						
Սիմոնյան Ռուզան Մաքսիմի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Սիմոնյան Մաքսիմ Արշալույսի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Բաբայան Մադլենա Ալեքսեյի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Սիմոնյան Գեղամ Մաքսիմի	Ավագ գիտաշխատող	150 000	12	հիմնական	20	1 800 000
Հովսեփյան Անիչկա Սերյոժայի	Ավագ գիտաշխատող	75 000	12	համատեղություն	10	900 000
Ավետիսյան Սոնա Ոսկանի	Ավագ գիտաշխատող	75 000	12	համատեղություն	10	900 000
Գուրոջյան Մարիամ Միսակի	Կրտսեր գիտաշխատող	0	12	հիմնական	40	0
Հասմիկ Հայկի Եկմայան	Ավագ լաբորանտ	156 000	12	հիմնական	40	1 872 000
Բայան Գայանե Արթուրի	Ավագ լաբորանտ	40 000	12	ներքին համատեղություն	10	480 000

**Լաբորատորիա
Աղենիլային միացությունների նյութափոխանակության**

Անտոնյան Ալվարդ Ադիբեկի	Դեկավար	225 000	12	ներքին համատեղություն	20	2 700 000
Մարդանյան Սոնա Սմբատի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Շարոյան Սվետլանա Գարսևանի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Սարգստվա Ելիզավետա Գրիգորի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Հայրապետյան Հռիփսիկ Լյուդվիկի	Ավագ գիտաշխատող	150 000	12	ներքին համատեղություն	20	1 800 000
Սարգսյան Էլմիրա Յուրիկի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Կարապետյան Լուիզա Գարեգինի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Խաչատրյան Նարինե Խաչիկի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Բաքարյան Անահիտ Կարենի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Խաչատրյան Հռիփսիմե Սահակի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Բալազյոզյան Ռիմա Ռուբենի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Բալազյոզյան Վալենտինա Ռուբենի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Հեքիմյան Գայանե Կարենի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Գիշյան Ինեսա Բագրատի	Ավագ լաբորանտ	78 000	12	հիմնական	20	936 000

**Լաբորատորիա
Կենսաինժեներիայի**

Գյուլխանդանյան Գրիգոր Վազգենի	Դեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Ալչուջյան Նինա Խաչատուրի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Հովհաննիսյան Մարգարիտա Ռոբերտի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Մովսեսյան Նինա Հովհաննեսի	Գիտաշխատող	172 500	12	հիմնական	30	2 070 000
Մկրտչյան Լուսինե Վազգենի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Անդրեասյան Արմեն Արթուրի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Բաբաջանյան Անի Վահանի	Ավագ լաբորանտ	78 000	12	հիմնական	20	936 000
Իգիթյան Անի Վիկտորի	Լաբորանտ	60 000	12	հիմնական	20	720 000

**Լաբորատորիա
Բժշկական կենսատեխնոլոգիա**

Գասպարյան Վարդան Կառլենի	Դեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Պողոսյան Գայանե Գեորգիի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Մարուխյան Սեդա Սամվելի	Կրտսեր գիտաշխատող	180 000	3	հիմնական	40	540 000
Հովհաննիսյան Վարդուհի Ալբերտի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Գյուրջյան Քրիստինե Գառնիկի	Կրտսեր գիտաշխատող	180 000	11	հիմնական	40	1 980 000
Դավթյան Մարիա Պավելի	Ավագ լաբորանտ	156 000	12	հիմնական	40	1 872 000
Ռաֆայելյան Նելլի Արտյոմի	Լաբորանտ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Գալստյան Գոհար Նվերի	Լաբորանտ	60 000	12	հիմնական	20	720 000

**Լաբորատորիա
Կենսաբժշկական հետազոտությունների**

	Դեկավար			հիմնական		
--	---------	--	--	----------	--	--

Սեֆերյան Թորգոմ Երվանդի		450 000	12		40	5 400 000
Պարոնյան Զոյա Խաչատուրի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Ստեփանյան Հասմիկ Արամայիսի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Գրիգորյան Լուսինե Ստյոպայի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Հարոյան Աննա Ռաֆիկ	Կրտսեր գիտաշխատող	0	12	հիմնական	40	0
Գալստյան Անժելա Զավենի	Ավագ լաբորանտ	78 000	12	հիմնական	20	936 000
Առաքելյան Լուսինե Ռաֆաելի	Ավագ լաբորանտ	156 000	12	հիմնական	40	1 872 000
Փիլոյան Նարինե Սամվելի	Ավագ լաբորանտ	78 000	12	հիմնական	20	936 000
Խումբ Հիստորիկոմիայի և ֆունկցիոնալ մորֆոլոգիայի						
Սահակյան Ինեսա Կամոյի	Ղեկավար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Աբրահամյան Սիլվա Սամսոնի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Թումասյան Նարինե Վաղինակի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Քոչարյան Նունե Վլադիմիրի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Խումբ Նեյրոպեպտիդների կենսաքիմիա						
Սարոխանյան Ֆլորա Պետրոսի	Ղեկավար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Քնարյան Վարդուհի Հարությունի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Հունանյան Օվսաննա Վանիկի	Գիտաշխատող	115 000	12	հիմնական	20	1 380 000
Զաքարյան Հերմինե Հարությունի	Գիտաշխատող	230 000	6	հիմնական	40	1 380 000
Հակոբյան Աննա Արմենի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Խումբ Էլեկտրոնամանրադիտակային հետազոտությունների						
Մարգարյան Անահիտ Սամվելի	Ղեկավար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Հարությունյան Ժասմինա Էլլանի	Գիտաշխատող	57 500	12	հիմնական	10	690 000
Քուլջուրջյան Նոնա Սերգեյի	Գիտաշխատող	57 500	12	հիմնական	10	690 000
Ֆարսիյան Նարինե Վլադիմիրի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Գրիգորյան Գոհար Վազգենի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Գրիգորյան Սոնա Յուրիի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						250 818 000

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Ավարդ Աղիբեկի Աստոնյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման
ստորաբաժանման ղեկավար՝


(ստորագրություն)


(ԱԱՀ)

Կ. Տ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմի նյութափոխանակության գործընթացում նորմայում և տարբեր ախտաբանական պայմաններում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը Ծրագրի նպատակը և այդ նպատակին հասնելու համար առաջադրված խնդիրները օրգանիզմում նյութափոխանակության հետազոտումն է նորմայում և տարբեր ախտաբանական վիճակներում: Շարունակվելու են կենսաբանորեն ակտիվ միացությունների ազդեցությունների հետազոտությունները նյարդադեգեներատիվ, քաղցկեղային, աուտոիմուն և բորբոքային հիվանդությունների հիմքում ընկած նյարդաքիմիական և կենսաքիմիական մեխանիզմների պարզաբանման նպատակով և առաջարկվելու են հիվանդությունների կանխարգելման, բուժման տարբեր մոտեցումներ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները Հետազոտությունները իրականացվելու են պայմանագրում բերված աշխատանքի բովանդակության, օրացուցային պլանի համաձայն: Աշխատանքները իրականացվելու են ժամանակակից կենսաքիմիական, հիստոքիմիական, իմունոլոգիական մեթոդներով՝ բարձր արդյունավետության հեղուկային քրոմատոգրաֆիա, մասս-սպեկտրալ անալիզ, կլանման և ֆլուորեսցենտային սպեկտրասկոպիա, սպիտակուցների անջատման և մաքրման քրոմատոգրաֆիա և հել ֆիլտրացիա, քեմիլումինեսցենտային անալիզ, պրոտեոմիկի մեթոդներ, վեստերն բլոտինգ, իմունաֆերմենտային անալիզ (ELISA), քաղցկեղի բջիջների ֆոտոդինամիկ թերապիա, դոկինգ անալիզ:

4. Աշխատանքի բովանդակությունը.

Շարունակվելու են նյութափոխանակության համար կարևոր նշանակություն ունեցող կենսաբանական ակտիվ միացությունների ազդեցությանը վերաբերող հետազոտությունները նորմայում և տարբեր հիվանդությունների դեպքում: Առավել կարևորվում են այն հետազոտությունները, որոնք կնպաստեն նյարդադեգեներատիվ, ուռուցքային և առանձնապես շաքարախտ հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման գործընթացին:

Հետազոտվելու է որոշ դեղաբույսերի ազդեցությունը Ալցհեյմերի հիվանդության (ԱՀ) մոդելի դեպքում: Սերինային պրոտեազ դիպեպտիդիլ պեպտիդազ IV-ը (ԴՊՊIV) նախավերջին դիրքում Pro կամ Ala ամինաթթուներ ունեցող պոլիպեպտիդներից կտրում է N-ծայրային դիպեպտիդը: Ալցհեյմերի հիվանդության առաջացման չափորոշիչ Aβ(1-40/42) պեպտիդները ԴՊՊIV-ի սուբստրատներ են, ուստի, հավանական է, որ այս ֆերմենտը մասնակցում է ԱՀ-ի պաթոգենեզին, և առնչություն ունի ուղեղի նեյրոններում ամիլոիդային կուտակումների հետ: Ելնելով դրանից, ուսումնասիրվելու է Aβ(1-40/42) պեպտիդների *in vitro* ազդեցության ընթացքի և արդեն ձևավորված ագրեգատների ապակայունացման վրա *P. atlantica*, *Rubus caensius* և *Origanum vulgare* L. բույսերի թուրմերի ազդելու ունակությունը, ինչպես նաև ԴՊՊIV ֆերմենտի ակտիվության *in vitro* արգելակումը:

Առնետների սորեպտոզոտոցինով առաջացած շաքարախտի մոդելում ուսումնասիրվելու են գլյուտամին, ալանին, ասպարագին և էթանոլամին-O-սուլֆատ (էՕՍ) պարունակող խառնուրդի

հիպոգլիկեմիկ, հակադիաբետիկ ազդեցությունները՝ գլիկեմիկ կարգավիճակ, ԳԱԿԹ-ի քանակություն, ԳԱԿԹ-ի սինթեզի համար պատասխանատու գլուտամինազ և գլուտամատ դեկարբոքսիլազ ֆերմենտների ակտիվությունների որոշում արյան շիճուկում և ենթաստամոքսային գեղձում:

Ուսումնասիրվելու է ադենոզինդեամինազի իզոմերների (ԱԴԱ1 և ԱԴԱ2) ակտիվության շենը հղիների մոտ որպես հիվանդների իմունային կարգավիճակի չափանիշ, որը Հայաստանի բնակչության համար որոշված չէ: Կորոշվեն ԱԴԱ-ֆերմենտի, իզոմերների (ԱԴԱ1 և ԱԴԱ2) ակտիվության արժեքների և հղիության ընթացքում (նորմալ ընթացող և շեղումներով ուղեկցվող՝ դիաբետ, կանդիդոզ) որոշված արյան կենսաքիմիական ցուցանիշների հետ (արյան ձևավոր տարրեր, HbA1c, ֆիբրինոգեն և այլն) կորելյացիոն կապերը:

Հետազոտվելու է Հայաստանում տարածված դեղաբույսեր ծորենի (*berberis*), կաղնու կեղևի (*Quercus cortex*), կատվալեզվի (*bidens*), լոշտակի (*bryonia*) արմատների թուրմերի հակամանրէային ազդեցությունը պաթոգեն մանրէներ *St.aureus* (MRSA) և *St. aureus* վրա:

Ուսումնասիրվելու են Cd-ի քրոնիկ ազդեցությամբ արյան մակարդման համակարգում տեղի ունեցող փոփոխությունները և դրանց վերացմանն ուղղված միջոցները: Նման միջոցներից է պրոֆ. Ռ. Քամայանի առաջարկած ԳԱԿԹ-ից, գլուտամինից, β-ալանինից և էՕՍ-ից բաղկացած ամինաթթվային խառնուրդը (ԱԽ): Որպես Cd-ի աղբյուր օգտագործվելու է կադմիումի սուլֆատը ($CdSO_4$): Նույն տարիքի արու և էգ կենդանիների մոտ գնահատվելու են արյան պլազմային հեմոստազը բնորոշող փոփոխությունները՝ արյան ընդհանուր մակարդեղիությունը, ռեկալցի-ֆիկացումը, պրոթրոմբինային ինդեքսը, միջազգային նորմալիզացված հարաբերակցությունը, թրոմբինային ժամանակը, ֆիբրինոգենի քանակությունը:

Նախատեսվում է հետազոտել խոշոր եղջերավոր կենդանիների հիպոթալամուսի պեպտիդային քարտեզի ստացումը և պոտենցիալ կենսաբանական ակտիվություն ունեցող նոր պեպտիդների հայտնաբերումը:

Հետազոտվելու է ազնվամորուց ստացած սուպերօքսիդ ռադիկալների ազդեցությունը *Bacillus subtilis* և *Bacillus licheniformis*, *Azotobacter chroococcum* ազոտֆիքսող և ցիանոբակտերիաների վրա: Սուպերօքսիդ ռադիկալները, թափանցելով բակտերիաների բջջաթաղանթը, խթանում են օքսիդավերականգնման պրոցեսները և նպաստում բջիջների աճին ու բազմացմանը: Նախատեսվում է համակցել բուժիչ հատկություններով օժտված կաթնաթթվային և բիֆիդում բակտերիաների բակտերիոցին պեպտիդները անիոնային բնույթի պրոլինով հարուստ պեպտիդ գալարմինի հետ և ուսումնասիրել ստացված կոմպլեքսի հակամանրէային հատկությունները տարբեր ախտածին մանրէների նկատմամբ:

Շարունակվելու են աշխատանքները 1-ին և 2-րդ տիպի շաքարային դիաբետի դիֆերենցիալ ախտորոշման, կանխարգելման և բուժման համար: Կհամեմատվի ինսուլինի դիմադրողականության կապը մոնոամինային նյարդային հաղորդիչների մակարդակի և L-արգինին-կախյալ ազոտի օքսիդի էնդոգեն սինթեզի հետ արյան էլեկտրոլիտներում և պլազմայում: Կուսումնասիրվեն այս ցուցանիշների սեռային և տարիքային տարբերությունները, ինչպես նաև ինսուլինային թերապիայի տևողության և օքսիդատիվ սթրեսի՝ կատալազային ակտիվության և լիպիդների գերօքսիդացման գործընթացների ազդեցությունը:

ՆՕՔԻ-ի հետ համատեղ հետազոտվելու են ուռուցքային բջջային կուլտուրաների վրա տարբեր հակաուռուցքային նյութերի ազդեցության մեխանիզմները՝ բջիջների մահվան ապոպտոտիկ, նեկրոտիկ կամ հակապրոլիֆերատիվ ուղիների պարզաբանմամբ:

2-րդ տիպի շաքարային դիաբետով հիվանդների արյան շիճուկի նմուշներում իրականացվելու է գալարմինի քանակական որոշումը: Հետազոտվելու է նաև

Ֆիտոկանաբինոիդներից մեկի՝ կանաբիդիոլի ազդեցությունը տարբեր նեյրոգեգեներատիվ մոդելների վրա (ցրված սկլերոզ, իմոբիլիզացիոն սթրես և այլն):

Առնետների լյարդի փորձարարական ցիռոզի դեպքում նախատեսվում է հետազոտել հակաօքսիդանտային բնույթի նյութերի ազդեցությունը տարբեր ֆերմենտային համակարգերի ակտիվության կարգավորման վրա: Նախատեսվում է կատարելագործել ածխածնի քառաքլորիդով մակածված լյարդի փորձարարական ցիռոզի մոդելը և ՆՕԲԻ-ի հետ համատեղ ստանալ հակաօքսիդանտ վիտամին E-ի ջրալույծ պատրաստուկ:

Ուսումնասիրվելու է ֆոսֆոռիբոզիլ պիրոֆոսֆատ սինթետազ-1 և քսանտինօքսիդոզեդուկտազի դերը կլինիկական և փորձարարական գլխորկաստոմայի և ինսուլտի բուժման գործընթացում: GEO տվյալների բազան, GEOR2 գործիքները ծառայելու են ինսուլտի և գլխորկաստոմայի գենների արտահայտման պրոֆիլների վիզուալիզացիայի համար: Դիտարկվելու է այդ ֆերմենտների էֆեկտորների ազդեցությունը առաջնային նյարդային բջջային կուլտուրայի վրա նորմայում և ջրածնի պերօքսիդի առկայության պայմաններում: Ուսումնասիրվելու է միկրոբիոտայի դերը փորձարարական ինսուլտի գործընթացի վրա՝ *E.coli*, *Candida albicans* առկայությունը, քանակական ցուցանիշները արյան մեջ, գլխուղեղում, աղեստամոքսային տրակտում: Արյունից, գլխուղեղից և աղեստամոքսային տրակտից ստացած նմուշները կիրառվելու են այդ միկրոօրգանիզմների համար բնորոշ միջավայրերում ցանքս կատարելու նպատակով:

Կաթնասունների արյան էրիթրոցիտների ցիտոզոլից անջատվելու են էկտոNox, ինչպես նաև սուպերօքսիդ ռադիկալներ գեներացնող էկտոսոնգիատ, արյան շիճուկից էկզոNox, սուպերօքսիդ ռադիկալներ գեներացնող հոլոսոնգիատ և ապոսոնգիատ: Տարբեր պաթոլոգիաների ժամանակ հետվիրահատական փուլում մարդկային ուռուցքային հյուսվածքներից անջատվելու և ուսումնասիրվելու են նոր տիպի O_2^- գեներացնող սոնգիատ և նոր տիպի Nox, համեմատվելու են դրանց հատկությունները նորմայում և պաթոլոգիայում:

Որպես համալիր դեղամիջոց շարունակվելու են LVV-հեմորֆին-3-ի և ԴՊՊԻV-ի արգելակիչ սիտագլիպտինի համատեղ հակաշաքարախտային ազդեցության մոլեկուլային մեխանիզմների բացահայտման հետազոտությունները: Պարզաբանվելու է հեմորֆինի ազդեցությունը ԴՊՊԻV-ի սուբստրատներ GIP և GLP-1 պեպտիդների ակտիվության վրա: Ռոտենոնով հարուցված հիվանդության մոդելին զուգահեռ, ուսումնասիրվելու է նաև հեմորֆինի ազդեցությունը 6-OHDA-ով հարուցված Պարկինսոնի հիվանդության կենդանի մոդելի վրա:

Պարզաբանվելու են որոշ ֆիզիկական գործոնների (էլեկտրական հոսանք, տեսանելի և ՌԻՄ տիրույթի ճառագայթահարում) ազդեցությամբ թաղանթներում դիտվող ազատ ռադիկալային պրոցեսները, գնահատվելու է տարբեր կենսաակտիվ միացությունների օքսիդանտային կամ հակաօքսիդանտային ունակությունը այդ պրոցեսներում: Հետազոտվելու է տարբեր ֆիզիկական և քիմիական գործոնների ազդեցությունը լիպոսոմներով բարձրամոլեկուլային նյութերի տրանսպորտի գործընթացի վրա:

Մշակվելու է հիալուրոնաթթվի և կատիոնային պորֆիրինների ոչ կովալենտային կոմպլեքսի մաքրման և ստացման տեխնոլոգիա: Կախված ադսորբենտով աշտարակի բարձրությունից և լայնությունից հիալուրոնաթթու և կատիոնային պորֆիրիններ կոմպլեքսը և աշտարակի վրա գտնվող կոմպլեքսի չկապված բաղադրիչները տարբեր կերպ կտարանջատվեն, օպտիմալացումը կիրականացվի միմյանցից առավելագույն անջատմամբ:

Ստացվելու են արծաթի և ոսկու գլիկոնանոմասնիկներ: Նանոմասնիկների մակերեսային հատկությունները փոխվում են ստեղծելով մակերեսին NH_2 խմբեր: Այդ նպատակով նանոմասնիկները մշակվում են $SH(CH_2)_n-NH_2$ պարունակող լիզանոլով: Այնուհետև պերիոդատային եղանակով նանոմասնիկներին կապում են տարբեր շաքարներ: Այս տիպի նանոմասնիկները օգտագործվելու են դրանց շաքարների խնամակցությունը նորմալ և քաղցկեղային բջիջների

նկատմամբ ուսումնասիրելու համար դեղերի թիրախային համակարգ մշակելու նպատակով: Հետազոտությունները ուղղված կլինեն մագնիսական նանոմասնիկների պերոքսիդազի նման ակտիվության ուսումնասիրությանը: Կօգտագործվեն պերոքսիդազ չափելու ստանդարտ եղանակներ, կգնահատվի տարբեր գործոնների ազդեցությունը ակտիվության վրա և համակարգի կիրառելիությունը իմունաֆերմենտային անալիզում: Խորքային հյուսվածքների *in vivo* ուսումնասիրման համար կսինթեզվեն AgSe և AgS քվանտային կետեր, որոնք ինֆրակարմիր տիրույթում ունեն ֆլուորեսցենցիա: Կհետազոտվեն դրանց օպտիկական հատկությունների վրա ազդող տարբեր գործոններ: Կսինթեզվեն տարբեր ֆունկցիոնալ խմբերով կարբոնային կետեր, որոնք կօգտագործվեն տարբեր նյութերի կոնյուգացիայի համար: Կիրականացվի խիտոզանի նանոմասնիկների սինթեզ և քիմիական մոդիֆիկացիաներ՝ այն ավելի լուծելի դարձնելու նպատակով: Կուսումնասիրվի խիտոզանի հակաբիոտիկ և հակասնկային հատկությունների կախվածությունը այս պրոցեսներից:

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝

Ա. Բեգլյան
(ստորագրություն)

Վ. Կոնյուգացի
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

Ա. Բեգլյան
(ստորագրություն)

Վ. Կոնյուգացի
(անուն ազգանուն)

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ¹

«Կենսաբանական ակտիվ միացությունների դեղը օրգանիզմի կուրափոխանակության գործընթացում նորմայում և տարբեր պիտաբանական պայմաններում» ծրագրի

h/h	անվանումը	Իրականացվելիք	միջոցառման	կատարման ժամկետները:
1	Դեղաբույսերը հիվանդության դեմ	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը P. atlantica, Rubus caensius և Origanum vulgare և բույսերը, պատրաստել դրանց թուրմերը, անջատել բաղադրամասերը	կատարման 1-ին ետամսյակ
2	Նոր ամինաթթվային խառ-Շաքարային նյութի հակադիաբետիկ և մոնոեմի ստացումը GABA խթանիչ ազդեցու-թյունը	Կայուն պլազմային մակարդակի պահպանումը և հիպոգլիսեմիայի զբաղմունքի կրճատումը	Կայուն գլիկեմիկ վիճակին հետևելու և ստրեպտոզուրիայի կրճատման համար անհրաժեշտ ստրեպտոզուրիայի կրճատումը	
3	ԱՂԱ-ֆերմենտի և դրա իզոմերների (ԱՂԱ1 և ԱՂԱ2) ակտիվ-ությունը և դրանց օրգանիզմի կուրափոխանակության 2-նի օրոշումը հղի-ների մոտ	Արդյունավետ և անվտանգ ակտիվությունը և փոխարինում է (նորմալ, հղիության ընթացքում և այն կարող է այլ բարդացումներով ուղեկցող հղիներից) բնութագրել պացիենտի կարգավիճակը: Չափվելու են արդյունավետության 2-նի օրոշումը:	Արդյունավետ և անվտանգ ակտիվությունը և փոխարինում է (նորմալ, հղիության ընթացքում և այն կարող է այլ բարդացումներով ուղեկցող հղիներից) կարգավիճակը: Չափվելու են արդյունավետության 2-նի օրոշումը:	
4	Կարևոր կերակրի, կատալիզատիկ օրոշում, լոշտակի թուրմերի հակամանրէային պա-րեցուցումը պատճեն-ը Staphylococcus aureus (MRSA) և St. aureus մանրէների վրա:	Կարևոր կերակրի, հակամանրէային ազդեցությունը և անվտանգ ակտիվությունը	Բույսի թուրմի տարբեր կոնցենտրացիաներ-ը կարգավիճակում է Պետրոսի թափ մանրէային զագոնի վրա և ըստ առաջացած աճի ճնշման գոնանների մակարդակի և թափանցիկության որոշվում է հակամանրէային ազդեցության աստիճանը:	

